

«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

13.09.2016 11:37



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակ



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական խորհրդատվություն**» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի **հոկտեմբեր ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ**:

Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1),**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2),**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3):**

Բաղադրիչ 1.

Հոկտեմբեր ամսվա ընթացքում Գեղարքունիքի մարզ այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 2 փաստաբաններ, Գեղարքունիքի մարզից 1 փաստաբան** ընտրելու համար **(10-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից և Գեղարքունիքի մարզից:**

Բաղադրիչ 2.

Հոկտեմբեր ամսվա ընթացքում «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար՝ **Երևան քաղաքից թվով 2 փաստաբաններ, Կոտայքի մարզից 1 փաստաբան** ընտրելու համար **(10-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից և Կոտայքի մարզից:**

Բաղադրիչ 3.

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար **(6-րդ խումբ):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով 2եր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն

լեզուներով՝ այն ուղարկելով info@advocates.am կամ lyudvik.davtyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չեն փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի սեպտեմբերի 23-ը:

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են **ծրագրում:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ կամ գանգահարել շտաբի փաստաբանների պալատ:

Ծրագրի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com

Հեռ.՝ + 374 91 066 880

Առաջարկվող նորություններ



19.04.2016 շտաբի փաստաբանների պալատի կողմից ներկայացվել է Կոնսուլտացիոն Կենտրոնի Կազմակերպման Կարգավիճակի մասին հարցազրույցի արձագանքը:



17.05.2016 «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



14.06.2016 «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



14.07.2016 «ԱՆՎԵԱՐ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ԾՐԱԳԻՐ

```
վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```